Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորական եզրակացություն

2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Ալեքս Տեքստիլ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Երևան – 2024

«Ալեքս Տեքստիլ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին	էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
5/6 Halabyan str., Yerevan 0038, RA
Հեռ/Tel: (+374 10) 399 855, (+374 55) 560 550

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ալեքս Տեքստիլ»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության ղեկավարությանը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ալեքս Տեքստիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

1. Մենք հաստատվել ենք որպես ընկերության աուդիտորներ 2024թ. ապրիլի 3-ին և այդպիսով չենք հետևել տարեվերջի պաշարների փաստացի գույքագրմանը: Մենք ի վիճակի չենք եղել այլընտրանքային միջոցներով համոզվել 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների առկա քանակության վերաբերյալ: Հաշվի առնելով, որ պաշարների սկզբնական մնացորդները մասնակցում են ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի որոշմանը, մենք ի վիճակի չենք եղել որոշելու, թե արդյոք անհրաժեշտ կլինեին ճշգրտումներ հաշվետու տարվա շահույթի առնչությամբ՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ և գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքերի առնչությամբ՝ դրամական հոսքերի մասին հաշվետվության մեջ:

2. Ընկերությունը չի գնահատել ստացված անտոկոս փոխառությունների իրական արժեքը, զեղչված բոլոր ապագա դրամական հոսքերի ներկա արժեքով՝ օգտագործելով համանման պարտքային վարկանիշով համանման գործիքների (համանման՝ արժույթի, ժամկետի, տոկոսադրույքի տեսակի և այլ գործոնների տեսանկյունից) համար շուկայում գերակշռող տոկոսադրույքները: Սա ընկերության ղեկավարության կողմից ընդունված որոշման արդյունք է, որը մեր կարծիքով չի համապատասխանում ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի (Բաժին 11) պահանջներին: Ստացված անտոկոս փոխառությունների չզեղչված մնացորդը 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 6,152,136 հազար դրամ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր

եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: , որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար :

Այլ հանգամանք

Ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի չեն ենթարկվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերությյան գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերությյան ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել

հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն/աուդիտոր Լ.Պողոսյան

«26» հունիսի 2024թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«Ալեքս Տեքստիլ» ՍՊԸ
առ 31-ը դեկտեմբերի 2023թ դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	ԾՆԹ.	31/12/2023 հազ. դրամ	31/12/2022 հազ. դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	*2,524,270*	*2,479,123*
Տրված փոխառություններ	8	*16,200*	*2,963,981*
Հետաձգված հարկային ակտիվներ	36	*23,333*	*11,683*
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***2,563,803***	***5,454,787***
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	*2,777,695*	*2,529,784*
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	*2,965,097*	*3,809,452*
Տրված փոխառություններ	8	*11,000*	-
Շահութահարկի գծով գերավճար		*32,380*	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	*47,642*	*49,866*
Այլ ակտիվներ		*6,667*	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***5,840,481***	***6,389,102***
Ընդամենը ակտիվներ		**8,404,284**	**11,843,889**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	12		
Կանոնադրական կապիտալ		*308,053*	*183,838*
Չբաշխված շահույթ (կուտակված վնաս)		*(20,862)*	*2,575,032*
Ընդամենը սեփական կապիտալ		**287,191**	**2,758,870**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	13	*6,741,436*	*7,015,948*
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	14	*128,811*	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		***6,870,247***	***7,015,948***
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	13	*590,214*	*225,954*
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	14	*56,347*	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	*450,842*	*428,427*
Շահութահարկի գծով պարտավորություն		-	*389,515*
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություն	16	*80,038*	*960,271*
Պահուստներ	17	*69,405*	*64,904*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***1,246,846***	***2,069,071***
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**8,404,284**	**11,843,889**

10-ից 31-րդ էջերում ներառված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Մարատ Եսայան

Գլխավոր հաշվապահ
Ռազմիկ Մարուխանյան

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Ալեքս Տեքստիլ» ՍՊԸ

2023թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթ.	2023 հազ. դրամ	2022 հազ. դրամ
Հասույթ	18	*4,263,925*	*6,572,864*
Ինքնարժեք	19	*(3,403,742)*	*(4,806,252)*
Համախառն շահույթ		860,183	1,766,612
Այլ եկամուտներ	20	*30,829*	*1,260,464*
Իրացման ծախսեր	21	*(181,862)*	*(222,483)*
Վարչական ծախսեր	22	*(321,486)*	*(242,714)*
Այլ ծախսեր	23	*(141,797)*	*(1,388,047)*
Գործառնական շահույթ		245,867	1,173,832
Ֆինանսական ծախսեր	24	*(67,360)*	*(28,172)*
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ/վնաս	25	*(247,771)*	*138,168*
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		(69,264)	1,283,828
Շահութահարկի գծով ծախս	26	(42,321)	(208,294)
Տարվա շահույթ (վնաս) հարկումից հետո		(111,585)	1,075,534
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		(111,585)	1,075,534

10-ից 31-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն

Մարալ Մովսիսյան

Գլխավոր հաշվապահ

Ռազմիկ Սարուխանյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
«Ալեքս Տեքստիլ» ՍՊԸ
2023թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ

	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ (կուտակված վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2021թ.	**153,150**	**2,113,258**	**2,266,408**
Տարվա շահույթ	-	1,075,534	1,075,534
Հայտարարված շահաբաժիններ	-	(613,760)	(613,760)
Կանոնադրական կապիտալի համալրում	30,688	-	30,688
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2022թ.	**183,838**	**2,575,032**	**2,758,870**
Տարվա վնաս	-	(111,585)	(111,585)
Հայտարարված շահաբաժիններ	-	(2,484,309)	(2,484,309)
Կանոնադրական կապիտալի համալրում	124,215	-	124,215
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	**308,053**	**(20,862)**	**287,191**

10-ից 31-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Մարատ Մովսիսյան

Գլխավոր հաշվապահ
Ռազմիկ Մարուխանյան

"ԱԼԵՔՍ ՏԵՔՍՏԻԼ"
"АЛЕКС ТЕКСТИЛ"
"ALEX TEXTILE"
01262938

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Ալեքս Տեքստիլ» ՍՊԸ
2023թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2023-31.12.2023	01.01.2022-31.12.2022
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	**հազ. դրամ**	**հազ. դրամ**
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	4,841,602	6,074,986
Վճարումներ մատակարարներին	(1,372,069)	(4,079,340)
Վճարումներ աշխատակիցներին	(1,493,038)	(1,384,773)
Վճարումներ բյուջե, այդ թվում՝	(2,465,887)	(870,559)
Ռեզիդենտի շահութահարկ	*(475,945)*	*(33,045)*
Այլ մուտքեր	3,673	12,579
Այլ ելքեր	(82,465)	(116,123)
Գործառնական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(568,184)**	**(363,230)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերում	(234,916)	(316,595)
Տրամադրված փոխառություններ	(72,474)	(736,640)
Տրամադրված փոխառությունների մարում	45,290	183,791
Ներդրումային գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(262,100)**	**(869,444)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Կանոնադրական կապիտալի համալրում	124,215	30,688
Ստացված վարկեր և փոխառություններ	2,801,146	1,196,601
Վարկերի և փոխառությունների մարում	(1,997,786)	(816,465)
Վճարված տոկոսներ	(67,360)	(28,172)
Ֆինանսական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**860,215**	**382,652**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	29,931	(850,022)
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	(32,155)	7,755
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	49,866	892,133
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	47,642	49,866

10-ից 31-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Մարատ Մուսխիսյան

Գլխավոր հաշվապահ
Ռազմիկ Սարուխանյան

1. Ընդհանուր տեղեկություններ

«Ալեքս Տեքստիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է: Ընկերությունը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2014թ. Հուլիսի 21-ին: Պետական գրանցման համարն է՝ 290.110.821359, ՀՎՀՀ-ն՝ 01262938:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 308,053,431 ՀՀ դրամ, որը կազմված է 2 հատ բաժնեմասից՝ 273,872,567 և 34,180,864 ՀՀ դրամ անվանական արժեքով մեկական բաժնեմասից:

Ընկերության բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են հետևյալ մասնակիցներին.

Մասնակից	*Բաժնեմասը ՀՀ դրամով*	*Բաժնեմասի տեսակարար կշիռը (%)*
Աստղիկ Ալեքսանյան	273,872,567	88.90
Շողերինա Մկրտչյան	34,180,864	11.10
Ընդամենը	308,053,431	**100**

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, 0032, Շահումյան 5 փ, 37 տ, իսկ գործունեության հասցեն՝ ք.Երևան, Արշակունյաց 127/21 և ք. Երևան, Բագրատունյաց 5/3:

Ընկերությունը հիմնական գործունեությունն է՝

- Տեքստիլ և տրիկոտաժե կարի արտադրատեսակների արտադրություն,
- Գուլպաների և զուգագուլպաների արտադրություն:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2023 թվականին կազմել է 959 անձ, իսկ 2022 թվականին՝ 987 անձ:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության միանձյա գործադիր մարմինը՝ տնօրենը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չունի դուստր և կախյալ ընկերություններ:

Գործարար միջավայր

ՀՀ տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխություններից, ինչպես նաև հարկային և օրենսդրական այլ համակարգերի զարգացումից:

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից, և քանի որ, Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում, վերոնշյալ փոփոխություններն ազդեցություն են ունենում Ընկերության վրա:

Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված

պատերազմը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվեցին սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրեց անորոշությունը գործարար միջավայրում: 2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական ուժերը սկսեցին նոր ռազմական գործողություն, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ստիպված էր լքել իր բնակավայրը և տեղափոխվել Հայաստան՝ Ադրբեջանին թողնելով հսկողությունը տարածքի նկատմամբ:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը, այնուամենայնիվ՝ ապագա տնտեսական,քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Համադրելիությունը և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

Ֆինանսական հաշվետվությունները վերաներկայացված հոդվածներ չեն պարունակում:

5. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

Ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում այդ հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

Անընդհատության սկզբունք. Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

Փոխկապակցված անձանց հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը ունենում է գործարքներ իր կապակցված կողմերի հետ: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատվում են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ առկա չէ ակտիվ շուկա նման գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նման տեսակի գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում. Ակնկալվող պարտքային կորուստների չափումը կարևոր գնահատում է, որը իրականացվում է մեթոդաբանության, մոդելների և բազային տվյալների օգտագործմամբ: Հետևյալ բաղադրիչները զգալի ազդեցություն ունեն պարտքային կորուստների գնահատված պահուստի վրա՝ դեֆոլտի որոշումը, պարտքային ռիսկի էական աճը, դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ենթարկվածությունը ռիսկին և դեֆոլտի դեպքում կորստի գումարը, ինչպես նաև մակրոտնտեսական սցենարների մոդելները:

Պարտքային ռիսկի էական աճ. Պարտքային ռիսկի էական աճի փաստման համար Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի ժամկետի ընթացքում դեֆոլտի սկսվելու ռիսկը համեմատում է սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ դեֆոլտի սկսվելու ռիսկի հետ: Գնահատման գործընթացը դիտարկում է պարտքային ռիսկի հարաբերական աճը, այլ ոչ թե հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկի կոնկրետ մակարդակը:

6. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

6.1. Չափման հիմքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով կամ ամորտիզացվող արժեքով:

6.2. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր) ճանաչում է առանձին ակտիվ այն դեպքում, երբ՝ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Չափումը ճանաչման պահին

Ընկերությունը հիմնական միջոցի միավորը սկզբնական ճանաչման պահին չափում է սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ կանխիկ գնի համարժեքն է: Եթե վճարումը վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից հետաձգվում է, սկզբնական արժեքը ապագա բոլոր վճարումների ներկա արժեքն է:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

Չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով) հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

ա) Ընկերության կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը,

բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը,

գ) տեխնիկական հնացածությունը,

դ) հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Շենքեր և շինություններ	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Արտադրական, տնտեսական գույք և գործիքներ	8 տարի
Այլ հիմնական միջոցներ	8 տարի

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հետագա ծախսումները

Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են ճանաչման չափանիշները: Մասնավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է): Ամենօրյա սպասարկման ծախսումները չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

Ապաճանաչում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

6.3. Ոչ նյութական ակտիվներ

Չափումը ճանաչման պահին

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

(ա) դրա գնման գինը՝ ներառյալ ներկրման տուրքերն ու գնման չփոխհատուցվող հարկերը առևտրային զեղչերը և արտոնությունները հանելուց հետո.

(բ) ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագա չափում

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները) հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:

Ամորտիզացիա

Ամորտիզացիան պետք է հաշվարկվի այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

Ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը գնահատվում է զրո, իսկ ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդն է գծային մեթոդը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը ոչ նյութական ակտիվներ չունի:

6.4. Ակտիվների արժեզրկում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Ընկերությունը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Արժեզրկումից կորուստ

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Արժեզրկումից կորստի հակադարձում

Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

6.5. Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ ՖԻՖՈ (առաջին մուտք, առաջին ելք), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

6.6. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչում

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով: Այլ բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքը լավագույնս ներկայացվում է գործարքի գնով: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթը կամ վնասը գրանցվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է բացահայտվել միևնույն գործիքում դիտարկելի շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի մուտքային տվյալները ներառում են միայն դիտարկելի շուկայական տվյալները:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Չափման կատեգորիաներ

Ընկերությունը դասակարգում է ֆինանսական ակտիվները՝ օգտագործելով հետևյալ չափման կատեգորիաները. չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, չափվում են իրական արժեքով այլ համապարփակ եկամուտի միջոցով և չափվում են ամորտիզացված արժեքով: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումն ու հետագա չափումը կախված է ակտիվների պորտֆելի կառավարման համար Ընկերության բիզնես մոդելից, և ակտիվի դրամական հոսքերի բնութագրերից:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում-ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ

Ելնելով կանխատեսումներից, Ընկերությունը հաշվարկում է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները և ճանաչում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների համար պարտքային կորուստների գնահատված պահուստը:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստը: Իրական արժեքով այլ համապարփակ եկամուտի միջոցով չափվող պարտքային գործիքների ամորտիզացված արժեքի փոփոխությունները, առանց ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստի, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները արտացոլվում են այլ համապարփակ եկամտում «այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային գործիքներից եկամուտները՝ հանած ծախսերը» հոդվածում:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում

Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ Ընկերությունը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ.

(ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ

(բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ

(գ) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարգևատրումները կամ

(դ) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում դեբիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները դրամարկղում և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներն են: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը

պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են Ընկերության դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը և, որպես բաղադրիչ, դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ պարտավորություններում:

6.7. Ֆինանսական պարտավորություններ

Ճանաչում

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ապաճանաչում

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Ֆինանսական պարտավորությունների չափման խմբեր

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ՝ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների, և ֆինանսական երաշխիքային պայմանագրերի և վարկերի տրամադրման պարտավորությունների:

Առևտրական կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Ստացված վարկեր և փոխառություններ

Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով ստացված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (օգուտը) ճանաչվում է

- որպես սեփական կապիտալի այլ տարր, եթե ֆինանսական պարտավորությունը մասնակիցների ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական պարտավորությունը այլ կողմերի գծով է:

Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

6.8. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց կազմակերպության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Ընկերությունը աշխատակիցների բոլոր այն հատուցումների ծախսումները, որոնց նկատմամբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանն ծառայություններ մատուցելու արդյունքում ձեռք են բերել իրավունք, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն, աշխատակցին ուղղակիորեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե վճարված գումարը գերազանցում է մինչև հաշվետու ամսաթիվը մատուցած ծառայությունից առաջացած պարտականության գումարը, Ընկերությունը այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ երբ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի մեկ այլ բաժնով պահանջվում է, որ ծախսումը ճանաչվի որպես ակտիվի արժեքի մաս, ինչպիսիք են պաշարները կամ հիմնական միջոցները:

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

ա) Աշխատավարձը

բ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսինն են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,

գ) պարգևավճարները:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է նրանց հետագա փոխհատուցելի բացակայությունների իրավունքը: Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է չգեղչված լրացուցիչ գումարով, որը Ընկերությունը ակնկալում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքի արդյունքում:

Ընկերությունը պարգևավճարներից ակնկալվող ծախսումները ճանաչում է այն ժամանակ երբ կազմակերպությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

6.9. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Գործառնական վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում, բացառությամբ,

- երբ մեկ այլ պարբերական հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը նույնիսկ եթե վճարումները չեն կատարվում այդ հիմունքով, կամ

- վարձատուին հասանելիք վարձավճարները այնպես են որոշված, որ աճեն ակնկալվող ընդհանուր սղաճին զուգընթաց (հիմնված հրապարակված ինդեքսների կամ վիճակագրական տվյալների վրա)՝ վարձատուի կողմից ակնկալվող սղաճի հետևանքով ծախսումների աճը փոխհատուցելու համար:

Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են

որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Վարձակալության ժամկետի մեկնարկի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալը ֆինանսական վարձակալության շրջանակներում իր օգտագործման իրավունքները և պարտականությունները ճանաչում է որպես ակտիվ և պարտավորություն՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է, ընդ որում՝ դրանք որոշվում են վարձակալության սկզբի դրությամբ: Վարձակալի ցանկացած սկզբնավորման ուղղակի ծախսում (լրացուցիչ ծախսումներ, որոնք ուղղակիորեն վերագրելի են վարձակալության շուրջ բանակցություններին և համաձայնության ձեռքբերմանը) ավելացվում է որպես ակտիվ ճանաչված գումարին:

Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումն, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

6.10. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ ճանաչում

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական) որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Չափում

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքը (կամ դրույքները) այն դրույքն է (կամ դրույքները), որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

6.11. Հասույթ

Ընկերության հասույթը ձևավորվում է հիմնականում արտադրանքի վաճառքի գործարքներից:

Արտադրանքի վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները.

ա) Ընկերությունը զնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Ընկերությունը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Սովորաբար սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցումը զնորդին համընկնում է սեփականության իրավունքի կամ տիրապետման իրավունքի փոխանցման հետ:

Երբ ապրանքները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

Ծառայությունների մատուցում.

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա:

Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

6.12. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը.

Արտարժույթ	31.12.2023	31.12.2022
1 ԱՄՆ դոլար	404.79 ՀՀ դրամ	393.57 ՀՀ դրամ
1 եվրո	447.9 ՀՀ դրամ	420.06 ՀՀ դրամ
1 ռուբլի	4.5 ՀՀ դրամ	5.59 ՀՀ դրամ

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

- *Փոխարժեքային տարբերությունների ճանաչումը*

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը

տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

6.13. Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից) կիրառելով հարկերի դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում): Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Եկամուտ կամ ծախս ներկայացում

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

(ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

(բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

6.14. Սխալներ

Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

6.15. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

6.16. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե Ընկերությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ: Երբ Ընկերության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Ընկերությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած:

7. Հիմնական միջոցներ

		Օտգագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ		Մաշվող հիմնական միջոցներ						Ընդամենը
	Հողամասեր	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Տեղակայման ենթակա սարքավորումներ	Շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	
Սկզբնական արժեք										
Առ 01.01.2023թ.	30,958	962,077	-	904,796	1,997,436	-	11,000	134,843	230,793	4,271,902
Գնում/կապիտալացում	-	50,584	33,333	-	61,984	144,588	18,483	-	19,765	328,737
Օտարում	-	-	-	-	(21,773)	-	-	-	-	(21,773)
Առ 31.12. 2023թ.	30,958	1,012,661	33,333	904,796	2,037,647	144,588	29,483	134,843	250,557	4,578,866
Մաշվածություն										
Առ 01.01.2023թ.	-	-	-	(143,229)	(1,477,012)	-	(3,755)	(63,571)	(105,211)	(1,792,779)
Հաշվարկ	-	-	-	(45,352)	(177,263)	(19,278)	(2,019)	(10,359)	(29,319)	(283,590)
Օտարում	-	-	-		21,773	-	-	-	-	21,773
Առ 31.12.2023թ.	-	-	-	(188,581)	- 1,632,502	- 19,278	(5,775)	(73,930)	(134,530)	(2,054,596)
Հաշվեկշռային արժեք										
Առ 31.12.2022թ.	30,958	962,077	-	761,568	520,423	-	7,245	71,271	125,581	2,479,123
Առ 31.12.2023թ.	30,958	1,012,661	33,333	716,216	405,144	125,309	23,709	60,912	116,027	2,524,270

31.12.2023թ.-ի դրությամբ 1,228,606 հազ. դրամ սկզբնական արժեքով 432 անուն շահագործվող հիմնական միջոցներ հաշվառված են զրոյական հաշվեկշռային արժեքով:

Մաշվածության ծախսը ըստ ծախսային հոդվածների բաշխվել է հետևյալ կերպ.

	2023	2022
Իրացման ծախսեր	6,278	4,957
Վարչական ծախսեր	81,913	72,553
Արտադրական ծախսումներ	195,399	192,982
Ընդամենը	**283,590**	**270,492**

8. Տրված փոխառություններ

	31.12.2023	31.12.2022
Կապակցած կողմերին տրված 12 ամսից ավել մարման ժամկետ ունեցող փոխառություններ	16,200	2,963,981
Մինչև 12 ամիս մարման ժամկետ ունեցող փոխառություններ	11,000	-
Ընդամենը	**27,200**	**2,963,981**

Տրված փոխառությունները անտոկոս են, ապահովված չեն գրավով, չունեն մարումների պայմանագրով սահմանված գրաֆիկ:

9. Պաշարներ

	31.12.2023	31.12.2022
Պատրաստի արտադրանք	1,384,347	1,004,712
Նյութեր	1,352,126	1,480,333
Ապրանքներ	41,222	44,739
Ընդամենը	**2,777,695**	**2,529,784**

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2022	31.12.2022
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	3,011,183	3,358,682
Տրված ընթացիկ կանխավճարներ	14,063	450,770
Այլ դեբիտորական պարտքեր	75	-
Դեբիտորական պարտքեր հնարավոր կորուստի պահուստ	(60,224)	-
Ընդամենը	**2,965,097**	**3,809,452**

11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2023	31.12.2022
Ազգային արժույթի դրամարկղ	2,525	1,482
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	40,154	17,270
Բանկային հաշիվներ արտարժույթով	4,964	31,114
Ընդամենը	**47,642**	**49,866**

12. Սեփական կապիտալ

Սեփական կապիտալը ձևավորված է կանոնադրական կապիտալից և չբաշխված շահույթից:

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 308,053,431 ՀՀ դրամ, որը կազմված է 273,872,567 և

34,180,864 ՀՀ դրամ անվանական արժեքով մեկական բաժնեմասից: Հաշվետու տարում մասնակիցները կանոնադրական կապիտալը համալրել են 124,215,431 դրամով:

Չբաշխված շահույթ

Ընկերությունն իրավունք ունի յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ իրականացնել իր շահույթի բաշխում մասնակիցների միջև: Շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից: Բաշխման ենթակա շահույթը բաշխվում է ընկերության մասնակիցների միջև՝ ըստ ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնետոմսերի չափերի: Ֆինանսական տարվա ընթացքում ընկերությունը հայտարարել է 2,484,309 հազար դրամ շահաբաժիններ, որը ամբողջությամբ վճարվել է մասնակիցների փոխառությունների վերաձևակերպման և փոխմարման միջոցով:

13. Վարկեր և փոխառություններ

	31.12.2023	31.12.2022
12 ամսից ավել մարման ժամկետ ունեցող բանկային վարկեր	589,300	845,020
12 ամսից ավել մարման ժամկետ ունեցող փոխառություններ	6,152,136	6,170,928
Ընդամենը ոչ ընթացիկ վարկեր և փոխառություններ	**6,741,436**	**7,015,948**
Մինչև 12 ամիս մարման ժամկետ ունեցող բանկային վարկ	537,004	225,954
Մինչև 12 ամիս մարման ժամկետ ունեցող բանկային ակրեդիտիվ	53,210	-
Ընդամենը ընթացիկ փոխառություններ	**590,214**	**225,954**

Փոխառությունները ստացվել են կապակցված կողմերից, գրավով չապահովված 5-10 տարի մարման ժամկետ ունեցող փոխառության պայմանագրերի հիման վրա: Փոխառության պայմանագրերով դրանց աստիճանական մարման գրաֆիկներ սահմանված չեն:

Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար գրավադրվել են ընկերությանը պատկանող ՀՀ ք. Երևան, Արտաշատի խճուղի 2/6 և ք.Երևան, Արշակունյաց պող 127/22 հասցեներում գտնվող անշարժ գույքերը: Վարկերի և տրված լիզինգների ապահովման միջոց են հանդիսանում նաև Ընկերության 40,000 հազար դրամի ֆինանսական հոսքերը, 364,014 հազար դրամ գումարով շրջանառու միջոցները, ինչպես նաև երրորդ անձանց տրված երաշխավորությունները:

14. Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ

	31.12.2023	31.12.2022
12 ամսից ավել մարման ժամկետ ունեցող լիզինգի գծով պարտավորություններ	128,811	-
Մինչև 12 ամիս մարման ժամկետ ունեցող լիզինգի գծով պարտավորություններ	56,347	-
Ընդամենը	**185,158**	-

Ընկերությունը հաշվետու տարվա ընթացքում ֆինանսական վարձակալությամբ ձեռք է բերել արտադրական մեքենասարքավորումներ և արևային համակարգ՝ 3 տարի մարման ժամկետով, ամբողջությամբ սուբսիդավորվող տոկոսներով : Ի ապահովում լիզինգի գծով պարտավորությունների, գրավադրվել են Ընկերության 40,000 հազար դրամ գումարով ֆինանսական հոսքերը, 364,014 հազար դրամ շրջանառու միջոցներ, տրվել են 208,605 հազար դրամի և 297,807 Եվրոյի երաշխավորություններ:

Ապագա նվազագույն վարձավճարները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ըստ ժամանակաշրջանների կազմել են՝

	31.12.2023	31.12.2022
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	68,409	-
Սուբսիդավորվող ֆինանսական ծախս	(12,061)	-
	56,347	-
Երկրորդից երեք տարիների ընթացքում		
Վարձավճարներ	139,516	-
Սուբսիդավորվող ֆինանսական ծախս	(10,705)	-
	128,811	-
Զուտ ներկա արժեք	**185,158**	-

15. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2023	31.12.2022
Առևտրային կրեդիտորական պարտքեր	439,857	411,080
Ստացված ընթացիկ կանխավճարներ	10,985	17,347
Ընդամենը	**450,842**	**428,427**

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 72 օր (2022 թվականին՝ 28 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

16. Հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ՝ բացառությամբ շահութահարկի

	31.12.2023	31.12.2022
Ավելացված արժեքի հարկ	44,672	912,231
Եկամտային հարկ	27,854	39,880
Սոցիալական վճար	4,477	4,718
Դրոշմանիշային վճար	3,034	3,442
Ընդամենը	**80,038**	**960,271**

17. Պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կուտակված փոխհատուցելի բացակայությունների գծով կարճաժամկետ հատուցման գումարները արձակուրդների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդներն օգտագործելիս: Ձեղչման ազդեցությունը համարվել է ոչ էական և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

18. Հասույթ

	-2023-	-2022-
Արտադրանքի վաճառքից	4,184,702	6,502,427
Ապրանքների վաճառքից	10,673	8,350
Ծառայությունների մատուցումից	68,550	62,086
Ընդամենը	**4,263,925**	**6,572,864**

19. Ինքնարժեք

	-2023-	-2022-
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	3,336,086	4,746,438
Վաճառված ապրանքների ինքնարժեք	5,209	3,757
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	62,447	56,057
Ընդամենը	**3,403,742**	**4,806,252**

20. Այլ եկամուտներ

	-2023-	-2022-
Այլ պաշարների վաճառքից եկամուտներ	10,897	1,247,000
Հիմնական միջոցների օտարումից զուտ օգուտ, այդ թվում՝	15,000	-
- Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	15,000	-
- Վաճառված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեք	0	-
Այլ	4,933	13,464
Ընդամենը	**30,829**	**1,260,464**

21. Իրացման ծախսեր

	-2023-	-2022-
Տրանսպորտային և ապահովագրական ծախսեր	89,434	130,770
Հիմնական միջոցների մաշվածության, դրանց նորոգման և սպասարկման գծով ծախսեր	40,303	41,554
Աշխատանքի վճարման գծով	36,162	30,316
Արտադրանքի փաթեթավորման և պահպանման ծախսեր	9,453	14,968
Մարկետինգի և գովազդի ծախսեր	6,510	4,875
Ընդամենը	**181,862**	**222,483**

22. Վարչական ծախսեր

	-2023-	-2022-
Աշխատանքի վճարման գծով ծախսեր	110,964	84,742
Հիմնական միջոցների մաշվածության, դրանց նորոգման և սպասարկման գծով ծախսեր	82,900	72,566
Բանկային ծառայությունների և ապահովագրական ծախսեր	56,964	20,356
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	37,522	32,031
Հաշվապահական և խորհրդատվական ծախսեր	10,440	9,500
Գործուղման և ներկայացուցչության գծով ծախսեր	9,422	11,938
Վարչական այլ ծախսեր	13,274	11,581
Ընդամենը	**321,486**	**242,714**

23. Այլ ծախսեր

	-2023-	-2022-
Դեբիտորական պարտքերի կորուստի և հնարավոր կորուստի պահուստի ծախսեր	61,065	3,385
Ծախսեր տույժերից և տուգանքներից	41,370	43,448
Արտարժույթի փոխարկման ծախսեր	23,290	92,034
Օտարված այլ պաշարների ինքնարժեք	11,573	1,245,307
Գործառնական այլ ծախսեր	4,499	3,873
Ընդամենը	**141,797**	**1,388,047**

24. Ֆինանսական ծախսեր

	-2023-	-2022-
Ստացված վարկերի և ակրեդիտիվների գծով հաշվեգրված տոկոսագումարներ	67,360	28,172
Ընդամենը	**67,360**	**28,172**

25. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ (վնաս)

	-2023-	-2022-
Առևտրային դեբիտորական պարտքերի գծով	(126,295)	(285,723)
Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով	(34,053)	222,641
Դրամական միջոցների գծով	(32,155)	7,755
Ստացված վարկերի գծով	(54,245)	163,271
Ստացված փոխառությունների գծով	(1,040)	-
Տրված փոխառությունների գծով	16	30,223
Ընդամենը	**(247,771)**	**138,168**

26. Շահութահարկ

	-2023-	-2022-
Ընթացիկ հարկի գծով ծախս	(53,971)	(208,991)
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)	11,650	697
Շահութահարկի գծով ընդհանուր ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**(42,321)**	**(208,294)**

Ինչպես հաշվետու, այնպես էլ համադրելի տարում, շահութահարկի հաշվարկման համար ՀՀ «Հարկային օրենսգրքին» համապատասխան կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափը:

26.1. Շահութահարկի արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

	- 2023 -		- 2022 -	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ/վնաս մինչև շահութահարկով հարկումը	(69,266)		1,283,828	
Շահութահարկի գծով պայմանական ծախս	-	18%	(231,089)	18%
Չնվազեցվող / (չհարկվող) հոդվածներ	369,105	532.9%	(122,767)	9.6%
Հարկվող շահույթ	299,839		1,161,061	
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**(53,971)**	**-77.9%**	**(208,991)**	**16.3%**

26.2. Հետաձգված հարկեր

	31.12.2023		
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Նվազեցվող ժամանակվոր տարբերություն
Արձակուրդայինի գծով պահուստ	69,405	0	69,405
Դեբիտորական պարտքերի կորուստի պահուստ	60,224	0	60,224
Ընդամենը			**129,628**
Հարկի դրույքը			**18%**
Հետաձգված հարկային ակտիվ			**23,333**

	31.12.2022		
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Նվազեցվող ժամանակվոր տարբերություն
Արձակուրդայինի գծով պահուստ	64,904	0	64,904
Ընդամենը			**64,904**
Հարկի դրույքը			**18%**
Հետաձգված հարկային ակտիվ			**11,683**

27. Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության մասնակիցները, հիմնական ղեկավար անձնակազմը, համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունները և այլն:

27.1. Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրություն

Ընկերության առանցքային ղեկավար անձնակազմում ներառված է Ընկերության տնօրենը և փոխտնօրենը, որոնց կարճաժամկետ հատուցումները ներառյալ հարկերը կազմել են՝

	-2023-	-2022-
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	14,787	14,518

27.2. Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

Կապակցված կողմերի հետ կատարված գործարքները և դրանց մնացորդները հետևյալն են.

Մնացորդներ / գործարքներ	31.12.2022	Ավելացում	Նվազեցում	31.12.2023
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	2,088,173	1,413,612	(1,514,036)	1,987,749
Տրված կանխավճար	31,629	-	(31,629)	-
Կրեդիտորական պարտք ապրանքների և ծառայութ.-ների գծով	20	10,184	(9,519)	685
Տրամադրված փոխառություն	2,963,981	184,438	(3,132,220)	16,200
Ստացված փոխառություն	6,170,927	1,479,172	(1,497,964)	6,152,136
Ընդամենը	**11,254,731**	**3,087,407**	**(6,185,368)**	**8,156,770**

28. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերի կառավարումն Ընկերության համար ունի կարևոր նշանակություն: Դրանք հիմնականում կապված են պարտքային, իրացվելիության և արտարժույթի ռիսկերի հետ:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

28.1. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պայմանագրային մյուս կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը: Պարտքային ռիսկը կառավարվում է անհատական հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը գնահատվել է դեբիտորական պարտքերի մնացորդի 2%-ի չափով, որի չափով ձևավորվել է հնարավոր կորուստի պահուստ:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների պարտքային ռիսկը կառավարվում է դրամական միջոցները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

28.2. Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Ա) Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը ըստ հոդվածների ներկայացված է ծանոթագրություն 25-ում:
Ստորև ներկայացված են Ընկերության արտարժույթային մնացորդները, որը վկայում է բարձր արտարժութային ռիսկի մասին.

	31.12.2023			31.12.2022		
	USD	EUR	RUB	USD	EUR	RUB
Ֆինանսական ակտիվներ						
-Առևտրային դեբիտորական պարտքեր	487,317	20,689	39,332,695	718,167	48,295	118,398,990
-Դրամական միջոցներ	7,855	148	381,724	11,089	33	4,782,663
Ընդամենը	495,172	20,837	39,714,419	729,257	48,328	123,181,653
Ֆինանսական պարտավորություններ						
-Ստացված վարկեր և լիզինգ	241,236	1,649,476	0	0	1,485,160	0
-Առևտրային կրեդիտորական պարտքեր	758,355	26,751	5,402	822,696	27,218	27,218
Ընդամենը	999,591	1,676,227	5,402	822,696	1,512,377	27,218
Զուտ արդյունք	-504,419	-1,655,390	39,709,017	-93,440	-1,464,049	123,154,435

Բ) Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի, քանի որ ունի տոկոսային վարկեր:

28.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պարտավորությունները մարելու նպատակով համապատասխան դրամական միջոցների սակավության կամ բացակայության ռիսկն է: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել և անհրաժեշտ միջոցները, որոնք թույլ կտան մարելու դրամական հոսքերի հետ կապված պարտավորությունները:

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և տրված փոխառությունները:

Ստորև ներկայացված է Ընկերության ակտիվների ընթացիկ իրացվելիության վերլուծությունը.

	31.12.2023	31.12.2022
Ընթացիկ ակտիվներ	5,840,481	6,389,102
Ընթացիկ պարտավորություններ	1,246,846	2,069,071
Ընթացիկ իրացվելիության գործակից	**4.7**	**3.1**
Արագ իրացվելի ակտիվներ*	3,062,786	3,859,318
Ընթացիկ պարտավորություններ	1,246,846	2,069,071
Արագ իրացվելիության գործակից	**2.5**	**1.9**
Դրամական միջոցներ և համարժեքներ	47,642	49,866
Ընթացիկ պարտավորություններ	1,246,846	2,069,071
Բացարձակ իրացվելիության գործակից	**0.0**	**0.0**

* Արագ իրացվելի ակտիվների կազմում ներառվում են Ընկերության բոլոր ընթացիկ ակտիվները՝ բացառությամբ պաշարների:

29. Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը գտնվում է զարգացման փուլում, որի հետևանքով ապահովագրության շատ տեսակներ դեռևս չունեն լայն կիրառում: Քանի դեռ Ընկերության գույքը և գործունեությունը համապատասխան ձևով ապահովագրված չեն, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Ընկերության չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետությունում ձևավորված հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Հարկերը ենթակա են ուսումնասիրության համապատասխան իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով վերապահված է իրավունք կիրառելու պատժամիջոցներ (տուգանքներ, տույժեր) տնտեսավարող

սուբյեկտների և նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նրանց կողմից օրենսդրությունը խախտելու համար: Այս պայմաններում գոյություն ունի ռիսկ, որ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կարող են առաջանալ լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Թեև Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ հնարավոր լրացուցիչ հարկային պարտավորությունները չեն կարող էական լինել և դրանց գծով պահուստի ձևավորման անհրաժեշտությունը բացակայում է: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել՝ դրանցից բխող էական ազդեցություններով:

դ) Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ չունի այլ անձանց տրամադրած երաշխավորություններ:

ե) Գրավադրված ակտիվներ

Ընկերության կողմից գրավադրված ակտիվների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 13-ում:

30. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած, ինչպես նաև մինչև աուդիտորական եզրակացությունը ընկած ժամանակահատվածներում:

31. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2024թ հունիսի 26-ին:

Տնօրեն
Մարատ Մովսիսյան

Գլխավոր հաշվապահ
Ռազմիկ Սարուխանյան